



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ՏԻԱՐ ՀՐԱՆՏ ԲԱՄՊԱԿԵԱՆԻՆ «Ս. ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ»
ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՒԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ՀՐԱՆՏ ԲԱՄՊԱԿԵԱՆԻՆ
ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Միլանո

Տիրոջ ողորմութեամբ, մեր Մայր դաստիարակ Եկեղեցին իր առաքելութիւնը կը շարունակէ մեր հաւատաւոր ժողովուրդի ծոցին մէջ, ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի, ի շինութիւն մեր զաւակներու հոգևոր ու բարոյական կեանքին:

Մենք շատ ուրախ ենք հաստատելու, որ Դուք աւելի քան վաթսուն երկար տարիներ նուիրած էք՝ նախ Աթէնքի, ապա Միլանոյի մէջ, ազգային-եկեղեցական ու մշակութային կեանքի կազմակերպման ու զարգացման, բացառիկ ծառայութիւններ մատուցելով՝ հայ մշակոյթի փառաւոր արժէքները ծանօթացնելու հայ և այլազգի հասարակութեանց լայն շրջանակներուն, իտալիա եւ այլ երոպական երկրներ:

Արդ՝ բարձրօրէն գնահատելով երկար տարիներու Ձեր ազգանուէր ազնիւ վաստակը և ընդառաջելով Արեւմտեան Եւրոպայի հայոց Հայրապետական Պատուիրակ Դերաշնորհ Տ. Գիւտ արքեպիսկոպոս Նազգաշեանի միջնորդութեան, այսու հայրապետական Մեր կոնդակով Ձեզի կը յղենք Մեր օրհնութիւնը և կը շնորհենք «ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ» շքանշանը, մաղթելով, որ զայն կրէք Ձեր հաւատաւոր սրտին վրայ արեւշատ երկար տարիներ, քաջաւորչութեամբ, նորանոր իրագործումներով և ընտանեկան երջանկութեամբ:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգով և յաւիտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մենք».

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Տուա կոնյակս ի 24 Նոյեմբրի
1989 Փրկչական ամի,
և ի սումարիս Հայոց ՌԵԼԸ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1855